ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան 22.11.2021թ.

2021 թվականի նոյեմբերի 22-ին կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) արտահերթ նիստը:

Մասնակցում էին.

Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի նիստը վարող)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Վ. Հովհաննիսյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Հ. Պողոսյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Վ. Պետրոսյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր
Հ. Ավագյան	- ԱԱՏՄ ղեկավար
Գ. Հովհաննիսյան	- ԱԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խորհրդի քարտուղար)
Թ. Հակոբյան	- ԱԱՏՄ որակի ապահովման վարչության պետ
Ե. Զադոյան	- ԱԱՏՄ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության պետ
Ա. Ավետիսյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդական

Բացակայում էին՝

Ն. Մկրտչյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)

Ք. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

Օրակարգ.

1. ԱԱՏՄ 2022 թվականին իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

2. ԱԱՏՄ 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

3. ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

4. «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 6-ի N 14-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Խորհրդի որոշման նախագծի քննարկում և հաստատում:

Ա. Ասոյանը առաջարկեց հաստատել օրակարգը, որում ընդգրկված էր 4 հարց:

Խորհրդի անդամները միաձայն քվեարկությամբ հաստատեցին օրակարգը:

1. Քննարկվեց օրակարգի հարցը՝ ԱԱՏՄ 2022 թվականին իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագրի քննարկում և հաստատում.

Հ. Ավագյանը նշեց ներկայացված ծրագրի ընդհանուր մոտեցումների վերաբերյալ: Ծրագիրը կազմվել է առաջնորդվելով ՀՀ կառավարության 22.08.2019թ. N 1124-Ն որոշմամբ հաստատված ԱԱՏՄ կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և որի հիման վրա պետական մարմիններից հարցում է արվել տվյալների բազաների վերաբերյալ: Շուրջ 118.400 տնտեսավարողների տվյալներ են ուսումնասիրվել, որի արդյունքում դուրս է բերվել և Խորհրդի քննարկմանն է ներկայացվում իրականացվելիք ստուգումների ծրագրի երկու տարբերակ: Ծրագրի երկու տարբերակ ներկայացնելու պատճառը հանդիսանում է այն, որ ԱԱՏՄ-ին աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողական լիազորության վերապահմամբ, պետք է փոփոխություն կատարվի ՀՀ կառավարության 22.08.2019թ. N 1124-Ն որոշմամբ հաստատված ԱԱՏՄ կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության մեջ, որպեսզի հաջորդ տարի հնարավորություն լինի վերահսկողություն

իրականացնել տարեկան ստուգումների ծրագրով նաև այդ ոլորտում: Այժմ մեթոդաբանության փոփոխությունները գտնվում են քննարկման փուլում:

Նախորդ տարի նախատեսված էր 192 ստուգում, այս տարի 241, իսկ մյուս տարի նախատեսվում է 310: Բացի նշված թվերից պետք է հաշվի առնել, որ այդ ստուգումներով պայմանավորված իրականացվում են նաև վերստուգումներ: Որպես կանոն վերստուգումները ընդգրկում են ստուգումների ծրագրի 20 տոկոսը: Այսինքն, եթե պայմանական հաստատվում է 310 ստուգում, ապա վերստուգման գործընթացը հաշված իրականացվում է 360 ստուգում:

Բացի ստուգումներից նաև իրականացվում են բողոքների հիման վրա իրականացվող վարչական վարույթներ, ինչպես նաև կոռոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված ստուգայցեր: Այս տարի շուրջ 43.000 ստուգայց է իրականացվել: Դրանով պայմանավորված ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված է 306 ստուգում, որտեղ բարձր ռիսկային խմբում ընդգրկված տնտեսավարողներ են, որից 205-ը միայն աշխատանքի անվտանգության ոլորտում գործող տնտեսավարողներ են: Առաջարկվող 306 ստուգումներում աշխատանքի իրավունքի ոլորտի տնտեսավարողներ ընդգրկված չեն:

Նշվածով պայմանավորված առաջարկեց, որ եթե ՀՀ կառավարության 22.08.2019թ. N 1124-Ն որոշմամբ հաստատված ԱԱՏՄ կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության փոփոխությունները հաստատվեցին, որում ներառվելու է աշխատանքային իրավունքի ոլորտը, ծրագիրը կամ հաստատել այդ ոլորտի ներառմամբ, կամ՝ վերապահումով:

Ա. Ասոյանը նշեց, որ եթե մինչև դեկտեմբերի 1-ը մեթոդաբանությունը հաստատվեց, ապա կունենանք ստուգումների ծրագիր, որում ներառված է լինելու աշխատանքային իրավունքի ոլորտը, իսկ եթե մեթոդաբանությունը չի հաստատվում մինչև դեկտեմբերի 1-ը, ապա կհրապարակվի 306 տնտեսավարողների ցուցակը և հետագայում մեթոդաբանությունը հաստատվելուց հետո ՀՀ վարչապետին ներկայացված առաջարկի հիման վրա ծրագրում կակտարվի համապատասխան փոփոխություն՝ ներառելով աշխատանքի իրավունքի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին:

Լ. Նանուշյանը, հաշվի առնելով տարածվող կորոնավիրուսային հիվանդությունը, առաջարկեց բացառել ստուգումների տարեկան ծրագրի կազմման այն մոտեցումը, որը կիրառվում էր մինչև նշված հիվանդության տարածվելը: Միաժամանակ նշեց, որ հակահամաճարակային հսկողություն իրականացնելու առումով ծրագրում ընդգրկված են շատ քիչ տնտեսավարողներ, որը համահունչ չի կարող ընթանալ ներկա իրավիճակին:

Ա. Ասոյանը նշեց, որ յուրաքանչյուր դեպքում ԱԱՏՄ-ն արդեն իսկ իրականացնում է սանիտարահամաճարակային կանոնների ապահովման նկատմամբ ստուգայցեր, միաժամանակ առկա է չպլանավորած ստուգումների անցկացման օրենքով սահմանված դեպքեր, որոնց ժամանակ ԱԱՏՄ-ն իրավասություն ունի իրականացնելու համապատասխան ստուգումներ:

Վ. Պետրոսյանը նշեց, որ ըստ ոլորտային դիտարկումների, այս պահին թե՛ պոլիկլինիկաներում, թե՛ խոշոր բժշկական կենտրոնների դիագնոստիկ բաժիններում առկա է հակահամաճարակային կանոնների կոպիտ խախտումներ և հարցրեց, թե արդյոք այդ հիմնարկները ներառվել են ծրագրում, թե ոչ: Առկա են հերթերի կուտակումներ, որտեղ կանգնած են կորոնավիրուսով հիվանդ անձինք և այլ հիվանդությունով տառապող անձինք: Առողջապահության նախարարության կողմից մշակված կանոնակարգերի պահպանման մասին բժշկական կենտրոնները այդքան էլ տեղյակ չեն կամ ամբողջությամբ չեն պահպանվում և ԱԱՏՄ-ն պետք է կարևոր դեր ունենա որպեսզի սթափեցնի այդ կազմակերպություններին:

Հ. Ավագյանը նշեց, որ բարձրացված հարցերի մեծ մասը ստուգաթերթերով նախատեսված չեն և կիրառելի չեն ծրագրային ստուգումների ժամանակ, սակայն այդ պահանջները ՀՀ առողջապահության նախարարի այլ հրամանով նախատեսված են, որոնց նկատմամբ ԱԱՏՄ-ն իրականացնում է ստուգայցեր: Ստուգայցերը նաև իրականացվում են լաբորատորիաներում: Այդ ստուգայցերը կրում են շարունակական բնույթ՝ մինչև կարանտինի ավարտը:

Ա. Խոջոյանը առաջարկեց հաստատել երկու տարբերակն էլ՝ վերապահումով, որ մեթոդաբանությունը հաստատվելուց հետո փոփոխված ստուգումների տարեկան ծրագրի տարբերակը էլ. փոստով կներկայացվի Խորհրդի բոլոր անդամներին:

Լ. Նանուշյանը առաջարկեց հետագայում քննարկել կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդացած անձանց սպասարկող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների բարձր ռիսկայնության խմբում ընդգրկելու համաչափության հարցը և անհրաժեշտությունը: Հակառակ պարագայում կստացվի, որ այդ հիմնարկները ընդգրկվելու են բարձր ռիսկայնության խմբում և վերջիններիս նկատմամբ անընդմեջ ստուգում է իրականացվելու:

Ա. Ասոյանը առաջարկեց բարձրացված հարցի շուրջ կազմակերպել քննարկում, որի արդյունքում կսահմանվի ռիսկի հաշվարկման առանձին մեթոդաբանություն, որի համաձայն կկարգավորվեն կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդացած անձանց սպասարկող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ռիսկի հաշվարկային մեխանիզմները և չափանիշները կամ կդիտարկվի ՀՀ կառավարության 22.08.2019թ. N 1124-Ն

որոշման մեջ համապատասխան փոփոխություն և լրացում կատարելու հարցը: Սահմանվեց 10 օր ժամկետ՝ առաջարկություններ ներկայացնելու համար:

Վ. Պետրոսյանը պատրաստակամություն հայտնեց բարձրացված հարցին աջակցելու համար՝ առաջարկելով ընդգրկել համապատասխան միջազգային մասնագետների:

Շ. Դանիելյանը նշեց, եթե որպես չափանիշ դիտարկվի կորոնավիրուսային հիվանդությամբ մահացածների թիվը, ապա պետք է նաև դիտարկվի տվյալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպության աշխատանքի ծավալը:

Թ. Հակոբյանը նշեց, որ ներկայացված ծրագրում ընդգրկված են որոշ տնտեսավարողներ, որոնք գործունեություն են իրականացնում ԱԱՏՄ-ի վերահսկողության ոլորտից դուրս: Առաջարկեց այդ տնտեսավարողներին հանել ծրագրից:

Ե. Զադոյանը նշեց, որ տեղեկատվությունը ձեռք է բերվում պետական այլ մարմիններից և ստացված տվյալները համադրվում է սահմանված չափանիշների հետ, և արդյունքում ստացվում է համապատասխան գործակից, որով գնահատվում է տնտեսավարողի ռիսկի աստիճանը:

Ա. Ասոյանը առաջարկեց, եթե առկա են համապատասխան տվյալներ, այդ տնտեսավարողներին ծրագրում չընդգրկել:

Ա. Ասոյանը առաջարկեց քվեարկել վերապահումով, որ եթե մինչև դեկտեմբերի 1-ը մեթոդաբանությունը հաստատված կլինի, ապա դեկտեմբերի 1-ին կհրապարակվի ԱԱՏՄ-ի կողմից իրականացվելիք 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագիրը որում ընդգրկված կլինի նաև աշխատանքային իրավունքի ոլորտը:

Խորհրդի անդամների միաձայն որոշմամբ (7 կողմ) 2022 թվականի իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագիրը հաստատվեց:

Հ. Պողոսյանը առաջարկեց վերանայել Խորհրդի աշխատակարգը, բացառելով էլեկտրոնային քվեարկության մոտեցումը, ինչպես նաև անհրաժեշտ այլ առաջարկներ:

Ա. Ասոյանը առաջարկեց ներկայացնել համապատասխան առաջարկություններ, հարցը քննարկել և ներկայացնել Խորհրդին:

2. Քննարկվեց օրակարգի հարցը՝ ԱԱՏՄ 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում

Հ. Ավագյանը ներկայացրեց ԱԱՏՄ-ի կողմից իրականացված աշխատանքները և դրանցով պայմանավորված անհրաժեշտ կատարման ենթակա միջոցառումները: Կարևորեց միջոցառումների

ցանկում ընդգրկված ԱԱՏՄ-ի կազմում ուսումնական ՊՈԱԿ ստեղծելու անհրաժեշտությունը, որը վճարովի հիմունքներով ԱԱՏՄ-ին վերապահված վերահսկողության ոլորտներում կիրականացնի ուսումնական գործընթաց:

Ա. Ասոյանը առաջարկեց ձեռնպահ մնալ հարցին ընթացք տալուն, քանի որ ԱԱՏՄ-ի լիազորություններից է՝ իրեն վերապահված ոլորտում անվտանգության ապահովումը և օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը: Կարևոր գործառույթներից մեկն է նաև իրազեկումը, որպեսզի հնարավոր լինի առաջացող վտանգները կանխարգելել և վճարովի հիմունքներով ուսուցում իրականացնելը վերահսկողություն իրականացնող մարմնի և տնտեսավարողի միջև կառաջացնի շահերի բախում, որը անթույլատրելի է: Հետագայում վերահսկողություն իրականացնելու շրջանակներում վերահսկողություն իրականացնող մարմնի մոտ ուսուցում ստացած տնտեսավարողի նկատմամբ առաջանալու է կաշկանդվածություն: Առաջարկեց նման գործողությունը իրականացնել անվճար հիմունքներով:

Հ. Պողոսյանը օրինակ բերեց Պետական եկամուտների կոմիտեի կողմից իրականացվող ուսումնական գործառույթները և առաջարկեց նախադեպային սկզբունքով կիրառել նաև ԱԱՏՄ-ի նկատմամբ: Նշեց, որ ինչքան շատ անձանց ուսուցանել և բացատրական աշխատանքներ իրականացնել, այդքան կկանխարգելվի խախտումները:

Լ. Նանուշյանը առաջարկեց ԱԱՏՄ-ի ուսումնական կենտրոնի շրջանակներում ուսուցումը կամ իրազեկումը իրականացվի անվճար հիմունքներով՝ հիմք ընդունելով օրենքով ԱԱՏՄ-ին վերապահված լիազորությունները:

Ա. Խոջոյանը նշեց, որ ուսումնական կենտրոնի շրջանակներում աշխատանքները ԱԱՏՄ-ի լիազորություններին չեն վերաբերում, միաժամանակ առաջարկեց ավելի հաճախ իրականացնել իրազեկման աշխատանքներ:

Շ. Դանիելյանը նշեց, որ Պետական եկամուտների կոմիտեի կողմից ուսումնական գործընթացը վերաբերում է իր գործառույթների շրջանակներում կիրառվող ծրագրերի ծանոթացմանը և շահագործմանը:

Ե. Զադոյանը նշեց, որ ուսումնական գործընթացը իրականացվում է անձի նկատմամբ այլ ոչ թե տնտեսավարողի:

Հ. Պողոսյանը բարձրացրեց նաև ստուգաթերթերի մշակման փուլում քննարկման առարկա դարձնել Խորհրդի անդամների հետ և անհրաժեշտության դեպքում հարցը ընդգրկել Խորհրդի նիստի օրակարգ:

Ա. Ասոյանը նշեց, որ ուսումնական կենտրոնի ստեղծման միջոցառումը, անգամ, եթե 2022 թվականի ԱԱՏՄ-ի գործունեության տարեկան ծրագրում չընդգրկի, միևնույն է, դրան ընթացք տալու համար որևէ խոչընդոտ չի առաջանա: Առաջարկեց հարցը առանձնացնել և քննարկել: Առաջարկեց քվեարկել, պայմանով, որ ԱԱՏՄ-ի ուսումնական կենտրոն ՊՈԱԿ-ի ստեղծման միջոցառումը հանվի ծրագրից:

Խորհրդի անդամների միաձայն որոշմամբ (7 կողմ) 2022 թվականի ԱԱՏՄ գործունեության տարեկան ծրագիրը հաստատվեց:

3. Քննարկվեց օրակարգի հարցը՝ «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 6-ի N 14-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Խորհրդի որոշման նախագծի քննարկում և հաստատում:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է ԱԱՏՄ-ին նոր լիազորությունների վերապահմամբ: ԱԱՏՄ-ին վերապահվել է օրենքով նախատեսված աշխատանքային օրենսդրության ոլորտի պահանջների, ինչպես նաև բնակչության բժշկական օգնության և սպասարկման ոլորտում լիցենզիայի պարտադիր պահանջների և պայմանների կատարման նկատմամբ պետական վերահսկողության լիազորություն: Հաշվի առնելով, որ դեռ հաստատման պահին Խորհրդի 06.11.2019թ. N 14-Լ որոշմամբ նշված ոլորտները ԱԱՏՄ-ին չէին վերապահված, նախագծով առաջարկվում է կատարել համապատասխան լրացումներ՝ ներառելով նշված ոլորտները և դրանցով պայմանավորված սահմանել այդ ոլորտներում նաև սպառնացող վտանգի բարձր աստիճան համարվող դեպքերը: Արդյունքում սահմանվելու է նշված ոլորտներում դիմում բողոքներ ստանալու դեպքում ստուգում կամ վարչական վարույթ իրականացնելու կարգավորումները:

Ա. Ասոյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամների միաձայն որոշմամբ (7 կողմ) «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 6-ի N 14-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Խորհրդի որոշման նախագիծը հաստատվեց:

4. Քննարկվեց օրակարգի հարցը՝ ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրի քննարկում և հաստատում:

Թ. Հակոբյանը ներկայացրեց, որ որակի ապահովման վարչության 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը մոտարկվել է ԱԱՏՄ-ի գործունեության ծրագրին, հաշվի առնելով, որ դրան պահանջվող կանոնակարգումները սահմանված են օրենքով: Ծրագրում նշվել է ԱԱՏՄ-ի վերջին 2 տարվա ընդհանուր ձեռքբերումները և առաջընթացը, որակի ապահովման վարչության դերը, կատարված աշխատանքները, ներքին կանոնակարգումները: Անդրադարձ է կատարվել նաև արձանագրված խնդիրներին, որոնց կապակցությամբ նախատեսվում են համապատասխան միջոցառումներ, մասնավորապես տեսչական մարմնի ծառայողների մասնագիտական և գործնական փորձի կատարելագործմանը, անցկացնելով համապատասխան դասընթացներ, ինչպես նաև ստուգումների ավարտից հետո տնտեսավարողի կողմից ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց վերաբերյալ կարծիքի ներկայացման գործընթացի արդյունքում կատարված վերլուծություններին: Նախատեսվում են ստուգումների կասեցման և երկարաձգման, կարճված վարույթների գործընթացի նկատմամբ ուսումնասիրություններ, ինչպես նաև կարգադրագրերի կատարողականների կատարման նկատմամբ ուսումնասիրություններ և խնդիրների վերհանման աշխատանքներ: Նույնը վերաբերում է պարտված դատական գործերի պատճառների վերլուծության աշխատանքների իրականացմանը: Նախատեսվում է նաև իրականացնել ԱԱՏՄ կառուցվածքային ստորաբաժանումների ծանրաբեռնվածության վերաբերյալ վերլուծություն և ԱԱՏՄ-ում ոչ նյութական շահագրգռվածության ուսումնասիրության իրականացում, հաշվի առնելով միջազգային փորձը:

Հ. Պողոսյանը նշեց, որ որակի ապահովման վարչության կողմից իրականացվող գործընթացը կարևոր աշխատանք է, հաշվի առնելով, որ դրանով վերհանվում են ԱԱՏՄ-ի կողմից արձանագրված խնդիրները և առաջարկվում է դրանց լուծումները:

Ա. Ասոյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամների միաձայն որոշմամբ (7 կողմ) ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատվեց:

Ա. Ասոյանը առաջարկեց նաև՝ որակի ապահովման վարչության երրորդ եռամսյակի կատարողական գնահատումը քննարկել էլեկտրոնային քվեարկությամբ, իսկ որակի ապահովման վարչության երրորդ եռամսյակի հաշվետվությունը քննարկել Խորհրդի հաջորդ նիստին: Խորհրդի անդամները կողմ քվեարկեցին ներկայացված առաջարկին: Միաժամանակ որոշվեց խորհրդի հաջորդ նիստը հնարավորության դեպքում նախատեսել դեկտեմբերի երկրորդ տասնօրյակին:

Որոշվեց.

1. Հաստատել ԱԱՏՄ 2022 թվականի իրականացվելիք ստուգումների տարեկան ծրագիրը.

2. Հաստատել ԱԱՏՄ 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը.

3. Հաստատել «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 6-ի N 14-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Խորհրդի որոշումը.

4. Հաստատել ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2022 թվականի գործունեության տարեկան ծրագիրը.

5. Խորհրդի անդամներին՝ 10 օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ՝ կորոնավիրուսային հիվանդությամբ հիվանդացած անձանց սպասարկող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ռիսկի հաշվարկային մեխանիզմների և չափանիշների վերաբերյալ.

6. ԱԱՏՄ ղեկավար Հակոբ Ավագյանին՝

1) առաջարկությունները ստանալուց հետո 10 օրյա ժամկետում Խորհրդի անդամներ՝ Լենա Նանուշյանի, Արթուր Ասոյանի, Շուշանիկ Դանիելյանի և Վարդուհի Պետրոսյանի հետ համատեղ, կազմակերպել քննարկում ներկայացված առաջարկությունները ամփոփելու նպատակով.

2) 20 օրյա ժամկետում Խորհրդի անդամներին ներկայացնել ԱԱՏՄ ուսումնական կենտրոն ՊՈԱԿ ստեղծելու վերաբերյալ տեսլական և հիմնավոր առաջարկություններ:

6. Խորհրդի անդամ Հովսեփ Պողոսյանին՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի երրորդ տասնօրյակ ներկայացնել առաջարկություններ Խորհրդի աշխատակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

7. Քվորում ապահովելու դեպքում խորհրդի հերթական նիստ նշանակել 2021 թվականի դեկտեմբերի երկրորդ տասնօրյակին՝ ներառելով օրակարգում ԱԱՏՄ որակի ապահովման վարչության երրորդ եռամսյակի հաշվետվությունը:

8. ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2021 թվականի երրորդ եռամսյակի կատարողականի գնահատումը քննարկել և հաստատել էլեկտրոնային քվեարկությամբ:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝

Recoverable Signature

X

Signed by: ASOYAN ARTUR 4001830647

Ա. ԱՍՈՅԱՆ

ԽԱՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ